Լոռու մարզպետ Արամ Խաչատրյանին

Տեղեկատվություն ստանալու հարցում

Հարգելի պարոն Խաչատրյան

Համաձայն «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 6-րդ և 9-րդ հոդվածների՝ խնդրում եմ օրենքով սահմանված ժամկետում ինձ տրամադրել հետևյալ տեղեկատվությունը.

Ռուս –ուկրաինական պատերազմի հետևանքով Ռուսաստանը ժամանակավորապես արգելում է հացահատիկային և այլ մշակաբույսերի արտահանումը Եվրասիական տնտեսական տարածք, այդ թվում նաև Հայաստան: Ըստ պաշտոնական հաղորդագրության սահմանափակումը տարածվում է ցորենի, ,գարու, տարեկանի և եգիպտացորենի վրա: Խնդրում եմ հայտնել.

1.Ինչքան վարելահող ունի Լոռու մարզ, դրանից որքանն է ոռոգման տակ և մշակվում գյուղացիների կողմից:

2.Որքան է կազմել Լոռու մարզի ցորենի, գարու, տարեկանի և եգիպտացորենի 2021թ.-ի ցանքատարածքները և արտադրանքը:

3.Ստացված արտադրանքը քանի տոկոսով է բավարարում մարզի բնակչության հացի և անասնակերի պահանջմունքը:

4. Ստեղծված իրավիճակում ինչ միջոցառումներ են ձեռնարկվել Լոռու մարզպետարանի կողմից մարզի գյուղական բնակավայրերում ցորենի, տարեկանի, գարու և եգիպտացորենի արտադրությունը ավելացնելու և բնակչության պահանջմունքները բավարարելու համար:

5. Նշված մշակաբույսերի սերմացուներով գյուղացիներին ապահովելու ինչ երաշխիքներ ունի մարզպետարանը:

Կանխավ շնորհակալ եմ՝Սիվիլնեթի Լոռու մարզի թղթակից Լարիսա Փարեմուզյան

larisaparemuzyan@yandex.ru

her.091755148

18.02.2022թ.